

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեքշաբթի, 10 մարտի 2020 թ.

### **Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը հայտարարում է արտաքին մրցույթ՝ մեթոդաբանության, վերլուծության և միջազգային կապերի վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-34-Մ2-6) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի մեթոդաբանության, վերլուծության և միջազգային կապերի վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-34-Մ2-6) պաշտոնի բնութագրի, պաշտոնը զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված գործառույթների, իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, աշխատանքի բնագավառում փորձի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի մեթոդաբանության, վերլուծության և միջազգային կապերի վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-34-Մ2-6) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատ (ք. Երևան, Դեմիրճյան փողոց, ՀՀ Ազգային ժողովի տնտեսական մուտք, զանգահարել 011-888-145 հեռախոսահամարով) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում ([ձևը կցվում է](#)).

2. անձնագրի և սոցիալական քարտի և/կամ անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանքի և/կամ նույնականացման քարտի լուսապատճենները.
3. դիպլոմ(ներ)ի լուսապատճեն(ներ)ը.
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթ(եր)ի լուսապատճեն(ներ)ը.
5. զինվորական գրքույկի լուսապատճենը (նշված փաստաթուղթը ներկայացնում են արական սեռի անձինք).
6. մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի մարտի 10-ից մինչև 2020 թվականի մարտի 19-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 10:00-ից 12:30-ը և 14:30-ից 17:00-ը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի ապրիլի 10-ին՝ ժամը 11:30-ին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 19):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2020 թվականի ապրիլի 14-ին՝ ժամը 11:30-ին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 19):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 212 309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) դրամ:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ՝ 1, 25, 34, 111, 122, 198  
Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>,
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 4, 7, 12, 14, 16, 18, 22, 28, 29, 45, 33

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=130648>,

- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 5, 6, 8, 9, 16, 19, 20, 21, 22, 30

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120807>,

- «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 5, 8, 11, 12, 13, 16, 23, 25, 26, 27, 28, 32, 33, 34, 36, 38

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119273>

- «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 4, 5, 8, 10, 12, 13, 15, 19, 20, 22, 24, 28<sup>3</sup>

Հղումը՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=425>

- «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 2, 3, 6, 7, 10, 13, 15, 39

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=110820>

- «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 6, 7, 8, 10, 12

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=65056>

- «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 5, 11, 16, 17, 18

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=65102>

- Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 12, 16, 17, 19

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=91454>

- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 12, 23, 30, 34, 37

Հղումը՝ <https://www.arlis.am/documentView.aspx?docid=120733>

- «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 4, 5, 6, 15, 20

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=26193>

- « ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 10, 21

Հղումը՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150581>

- «Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքներ» (ISSAI 100)  
Հղումը՝ <http://armsai.am/files/issai/issai-100.pdf>
- «Լիմայի հռչակագիր» (ISSAI 1)  
Հղումը՝ <http://armsai.am/files/issai/issai-1.pdf>
- «Անկախության մասին Մեխիկոյի հռչակագիր» (ISSAI 10)  
Հղումը՝ <http://armsai.am/files/issai/issai-10.pdf>
- «Էթիկայի կանոններ» (ISSAI 30)  
Հղումը՝ <http://armsai.am/files/issai/issai-30.pdf>
- «Ֆինանսական աուդիտի հիմնարար սկզբունքներ» (ISSAI 200)  
Հղումը՝ <http://armsai.am/files/issai/issai-200.pdf>
- «Կատարողական աուդիտի հիմնարար սկզբունքներ» (ISSAI 300)  
Հղումը՝ <http://armsai.am/files/issai/issai-300.pdf>
- «Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքներ» (ISSAI 400)  
Հղումը՝ <http://armsai.am/files/issai/issai-400.pdf>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ <https://www.gov.am/am/announcements/item/346/> հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես՝

- «Խնդրի լուծում»  
հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/4.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf)
- «Հաշվետվությունների մշակում»  
հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/6.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf)

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 19, հեռախոսահամար՝ 011-888-145, էլեկտրոնային փոստի հասցե՝ [kadrer@armsai.am](mailto:kadrer@armsai.am)):

